

# ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018 թվականի \_\_\_\_\_-ի N\_\_-Ն

## ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի և 9-րդ հոդվածի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրելի Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հաշվեկշռում 2007 թվականի հունվարի 1-ին հաշվառված, 1996թ արտադրության, USIA72GWH596 մակնիշի մոտորանավակը (սկզբնական արժեքը՝ 12,875,000.00 ՀՀ դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 8,325,000.00 ՀՀ դրամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հաշվեկշռից և հանձնման-ընդունման ակտով հանձնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարներին՝ մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: